



ՄԱՐԹԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՄԱՐԹ 11 ՅՈՒԼԻՍ 1887

ԹԻԻ 3880

ՄԱՐԹԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրուածեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրուածը ղրկելու է առ մատակարարութիւն Սրբեկիւրի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային տեսութիւն (Հայ աշակերտ օտար վարձարանաց հըշ)

Ղ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ԱԼԵՒԻՍ վանք եւ իմ տը պաւորութիւնք

ԱԼԳ. ՏԸ ՄԻԻՍԷ Յիշէ (Կ. Նստակց) Պ. Տ. Իւզանդիոն եւ Կ. Պոլիս Էֆէնտին (վեդ) Բաղուած շաբաթ. լրոց

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 10 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇԽԱԿԵՐՔԻ ՕՏԱՐ ՎԱՐՓԱՐԱՆԱՅ ՄԷՁ

Լրագիրք հրատարակեցին մայրաքաղաքիս օտար վարձարանաց տարեկան հանգէմներու շնորհիւ նկարագրութիւններն, յորս բաղմաթիւ հայ ուսանողաց անուններ հանգայեցան մեր աչաց: Յաւ ի սիրտ նշմարեցինք այդ անուններն, որք ցոյց կուտան հայ ծընողաց անտարբերութիւնն եւ անհոգութիւնն իրենց զաւակաց դաստիարակութեան նկատմամբ: Արդարեւ, այդ ծնողաց շատերը գեւ չեն գիտեր թէ իրենք իրենց ձեռքը կը դատապարտեն իրենց զաւակներն ամուլ կըրթութեան մը եւ մտքի ու սրտի կուրծեան:

Օտար վարձարաններն այնքա՞ր դիւրին որս մը դատած են յանձին հայ աշակերտաց: Խօսքերնիս չէ պետական բարձրագոյն կրթարանաց վրայ, յորս հայ աշակերտք կրնան մտնել ազգային վարձարանաց մէջ խնամով ուսանել յետոյ իրենց կրօնը, լեզուն եւ ազգային պատմութիւնն, ոչ ալ Բոպէրդ-Գոլէճի վրայ, ուսկից ելնող ուսումնարարութեան ազգին պատուաբեր անհատներ

կը հանդիսանան: Մեր դիտողութիւններն են ի մասին այն կարգ մը հոգեւորական վարձարանաց, ճիշդութեամբ, Ֆռէնցերու, Բոյրերու եւն. որք հետզհետէ կը բազմանան մայրաքաղաքիս մէջ: Մօտէն առիթ ունեցած ենք քննելու այս վարձարանաց ներքին վիճակն եւ ուսումնական յայտագիրն: Հայ աշակերտք կը դատարարուին անդ միջնաւոր ոգւով մը եւ փտած դրութեամբ մը որք շուտով կը խամբեն նոցա մատաղ սրտերն. աղկից անդին, կ'ուսանին քիչ մ'ալ ֆրանսերէն, խօսակցութիւնը միայն, առանց կարողութիւն երկտող մը դրել ճիշդ եւ անսխալ. իսկ մնացեալ ուսումները բարձի թողի եղած են կամ բնաւ չեն աւանդուիր: այնպէս որ հայ աշակերտն, երկար տարիներ այդ վարձարանաց մէջ մնալէ յետոյ, բազում դժուարութիւնք, բարդապէս ու անապահով պէս մնասուել զկնի, վարձարանէն կ'ելնէ կատարեալ խնամատի մը դարձած, անկարող ու եւ գործի ձեռնարկելու: Ապահով պէտք է լինի թէ մեր թաղային ամենապատէն նախակրթարանաց ծրագիրն իմէ շատ աւելի ուսում կը պարտենալէ քան այդ վարձարանաց ծրագիրը:

Այս ցաւալի կրթութեան առջեւ ի՞նչ կ'ընեն հայ ծնողաց շատերը: Արտաքին պատիւը երեւոյթներէ խառնելով, կոյր զկուրայն կը դրկեն իրենց զաւակունքն օտար վարձարաններ, այս կերպիւ մեռցնելով իրենց զաւակաց անպագայն: Եթէ իրօք կը փափաքին կրթել տալ իրենց որդիները, միթէ չի կա՞ն մեր մէջ նորահաստատ կեդրոնական վարձարանք, մասնաւոր երկրորդական կրթարաններ, թաղային առաջնակարգ նախակրթարաններ, որոցմէ տարուէ տարի կ'ելնեն այնքան աշակերտներ ըստ բաւականին վարձած ուսմանց ու գիտութեանց մէջ եւ դաստիարակուած լիք հայ տղայ:

Խորին ուշադրութեան արժանի կ'ետ մ'է այս: Ժամանակ է որ հայ ծնողք ի բաց թօթափեն իրենց անփութութիւնն իրենց զաւակաց դաստիարակութեան նկատմամբ: Ֆրանսերէնի կամ ուրիշ ու եւ լեզուի մը խեղդել եւ կցկտուր ուսուցման համար չարժեք որ հայ պատանիք օտարանան ազգային զգացումէն եւ ընդունայն անցունեն իրենց մատաղ տիոց թանկագին ժամերը:

ԱԻԵԽԻ ՎԱՆՔ

ԵՒ ԻՄ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՔ

Սալնոճարոյ չորրորդ ձորամէջէն, որ կը ձեւանայ Մարթան եւ ձիւն հայ գիւղերի եւ Բաղէշի արեւելակողմի սիրուն լեռանց անջատումներէն, կ'ընթանայ Բաղէշի երրորդ գետը՝ որոյ առատ վտակները կը զովացնեն ուխտէն «Աւետիկ վանք»ի եւ Բաղէշի հաւաքային բաժանման հանուր բնակչաց եւ բերոց տաղը:

Բուն քաղաքամիջէն մէկ ժամ, իսկ համանուն թաղի սահմանէն երեք քարէնկէց հեռու է այդ վանքն: Իր նստուածքի տեղը թէեւ չէ այնքան լայն, բայց տեսարանն եւ զիրքը բոլորովին է մոգական: Տեղական աւանդութիւն մ'արդէն առաքելակերտ պատիւ կուտայ այդ շէնքին: Իսկ բուն վանքն «Աւետիկ» մականուամբ կանգնած Տաճար մ'է յանուն Ս. Աստուածածնայ. իր մականունն գոյութեան պատճառը լուսաբանող յատակ ոչինչ չունի, ու թէեւ մենք ալ բառախաղութիւններէն աւելի բանասիրութիւն կը յորգենք, սակայն այս մասին մեր կարծիքը չենք վարանիր յայտնել: Աստուծակէն եւ բուրդերէն կը նշանակէ որս, էի կամ որ ճիշդ է լին, բուն քրդական լեզուաւ կը թարգմանուի զար, (հար), ուրեմն՝ այս կրկին բառերի բաղադրեալ նշանակութիւնն է որս զարնէ կամ «որսորդի» վանք, եւ իրօք ձմեռը շատ յարմարութիւն կայ հոս որսալու նապաստակ, աղուէս, դայլ, սկիւռ եւ մուշտակցու կենդանիներ, որոնք այդ եղանակին անպակաս են գիշերներն աստ եւ անդ թափառելու ու իրենց կեր ճարելու:

Պատմական տեսակէտով չկան սորա անցեալի նկատմամբ ճշգրիտ տպացոյցներ: Ժամանակն իր ծանր ձեռքերով խորապէս թաղած է նորա անցեալը: Ներկան մի միայն ի յայտ կը բերէ վանուցս տաճարի այն քար ու կիր գեղեցիկ շէնքն՝ որ իր անուրբ կաթողիկէիւ համեռտ կոյսի մը տիպարը կը կրէ: Տաճարի շուրջ կը պատեն մէկ քանի պարզ սենեակներ ու անկարգ ախոռներ: Վանուց տաճարէն դուրս եղած շէնքերի կարգաւորութեան վրայ միջին դարու ճաշակ կը տիրէ: Եւ քաւոս մը իր տնտեսական վիճակի մէջ: Այս վանուց եկամուտի տղերքը են՝ ի մէջ այլոց մէկ երկու Զբաղաց, Կիւղէլ տէրէի հայ գիւղօրէից թեմական քահանայ եւ իր չորս կողմը պատող յուսթի արտօրէից քերէն, որոց ամենն ալ ինչպէս որ կը գոյանան այնպէս էլ իր կորսուին: Վանահայր Մօսկոնցի Պօղոս վարդապետ՝ որ երկար տարիներէ հետէ բուռնած է հոս, այնքան անհոգ է նոյն իսկ իր անձի վրայ, որքան անձանօթ կեանքի հանգամանաց: Ո՛ր կը մնայ ուրեմն գիտակցութիւն եւ համոզութիւն այդպիսի շէնքի մը մատակարարութեան:

Դուրս գնանք նորա հարաւային կողմի ընդարձակ եւ կեղտոտ բակէն, անցնինք արեւելեան խարխուղ դռնէն, իջնենք Թագէտի եւ Թովմաս առաքելոց անուամբ յորջոյն ալ կամարակալ զոյգ ականց յուխտ, որոնք հովասուն ուսններու եւ բարտններու պուրակի մը ձախակողմէն երստուն քայլ հեռի, կը հասնին կաթնահամ եւ ջինջ ծորումներով եւ գեղ ու դարման են բարեպաշտ ժողովրդեան զանազան ցաւոց եւ ախտերին, յորինակ հին Պրոպոտիկէի... Ո՛հ, հաւատացեալ բարի մայրեր, որպիսի՜ երկիւղածութեամբ կը խոնարհին, կը համբուրեն եւ կը յարգեն այդ նուիրական ակներն ի սէր այն խորհրդաւոր անուանակոչութեանց... եւ ի՞նչ կայ հայ կնոջ մը, մանաւանդ Հայաստանցի հայ կնոջ, պաշտելի՜ եւ սիրելի քան, զոյգ մը արազան առաքելոց յիշատակն, ոյց վարդապետութեանց բարոյական կենդանի ջուրն ողջոյն Հայաստան ամբողջ: Ժողովրդական բարեպաշտութիւնը կատարեալ հաւատքով տասնաւոր դարերէ ի վեր թանձրացեալ օրինակներով կը փաստէ այդ ճշմարտութիւնն եւ գամ քան զգամ կը զօրանայ հաւատոյ էութիւնն մեր ժողովրդեան մէջ...

Տարոյ երկտասարդ եղանակի զանազան օրերը կը կազմեն այս վանուց համար տօնի եւ զօսանաց առիթներ, ուր կը խմբուին քաղաքի եւ շրջակայ գիւղերի բնակիչք ու կը ներկայեն այնպիսի տեսութիւններ որոնք իրենց բնական եւ պարզ պատկերներով կը գրաւեն մեր սրտերն եւ կը գրգռեն մարդկային հետաքրքրութիւններն: Այս հանդէսները տեղական առմամբ կը կոչուին շաբաթէք ու կը կրեն հետաքրքրական մանրամասներ:

Բ.

Շատ տարիներ տեսած եւ քանի մը հանդէսներին հանդիսատես եղած եմ հոս, ու ամեն անգամ էլ զատ զատ տպաւորութեան ենթարկուած. բայց 1884 մայիսի վերջին եօթնեկի հանդէսը՝ զոր կը տօնեն սովորաբար Եղիա մարգարէի տօնի օրն՝ անջինջ տպաւորութիւն մը գործած է սրտիս:

Նախապատրաստութիւն արդէն տեսած էինք, երեք հոգեկից ընկերներով՝ առջի իրիկունէէ այդ վանքը գիւղերելու եւ մանրամասնաբար ծանօթանալու նոյն հանդիսի մէջ մի հանգամանաց: Երկուստարդ ընկերներու անմեղ խանդը կրկնակի կը վառէր իմ փափաքը: Շաբաթ օր էր, եւ շաբաթօրեայ սահմանէն անմեղ ընկերներու ուրախութիւն մ'էր մեր սրտերը պատած եւ չէինք գիտեր թէ ինչպէ՛ս պիտի հասարակէր այն օրն որ կը թուէր լինել երկաթի դար:

Ժամացոյցի սլաքը ցերեկուան ժամ 10¹/₂ի վրայ կը պարզուի. ընկերներս, սիրելի՜ ընկերներս, ինձմէ անհամբեր, կը ստիպեն զիս ոտք ելնել: Արեւելեան մեր պաշտօնատեղէն, կ'անցնինք Բաղէշի ցամաք աղբւրի մէկ քանի միջավանդաւոր պղտիկ շուկայէն. մեր հայրենեաց փորթուգալ, այն ախորժակամ եւ զովացոյցիչ խաւքէլ, իր մատչալ եւ դաւար երեւոյթով կը գողնայ մեր սիրտըն ու կը դնենք քանի մ'օխայ. հագիւ կը մխտնենք վաթսուն փարայ. ի մի խորձ կապած զայն գոյքերնիս կրող անտեսին կը յանձնենք. մէկ կ'ուտենք եւ մէկ կը բաւենք, կը խօսինք եւ կ'երգենք. թեւեր կը խնդրենք որ թռչինք... զմեզ հանդարտեցնողն մեր աջակողմէն՝ Աւետի թաղի թուրք բը-

նակչաց դրախտատեսիլ պարտէզների տեսարանն, որոնք ուռի, բարտի, տանձի, խնձորի, սալորի, դամնի, կեռասի, թթի, բալի, գեղձի, կալիի, ընկուզի եւ ծառերի պակուցիչ սաղարթներ խոշումներով եւ արգասների ճոճումներով կը հիացնեն զմեզ: Սոխակն ու հազարան պիւլլուլ, սարեակն եւ գեղձակի, կ'աւառն եւ տատարակն իրենց դալալիկը խառնելով ծառոց եւ ծաղկանց անմահական բուրմանց հետ, կը յալչտակեն մեր միտք եւ խելք... ամեն պարտէզ անխոր օթուած է բնութեան այդ չքեղագոյն զարդերով եւ գետտուռն զոր բաղխած է Աւետի գետն՝ իր յորդ վտակների արծաթափայլ եւ ջինջ կայլակներով կը թանայ եւ կը լուայ այն ծիրանափայլ մարգերն:

Ոսկի երազների մէջ թաղուող տարիածուի մը նման անգագայօրէն կը կարենք այդ ճամբան. եւ ո՛չ գիտէ ո՛ր կը խոյանայ այն ժաման մեր միտ եւ ոգին... մեքենօրէն կը խօսին մեր լեզուներն ու կ'երգեն մեր շուրթերն նոր նոր երգերի, ձեկեր է գարուն, Սոխակը սիրուն, ձեկեր եմ ի ի դաշտ կ'անեմ ելեւէջ՝ եւ սրտազեղ կը տորներ...

Այդ վերջնայ Աւետի թաղի պարտիզաց շարքն եւ կը խզի յանակնկալս մեր աշակղմեան տեսարանի հմայք. կ'սթափինք մենք, մէկ ուստուումով կ'անցնինք վեր յիշած առուակը. մեր դէմ, շատ մօտէն կը տեսնուի Աւետի վանքը...

Ժամն արդէն 12ին կը հասնէր, մենք զանդաղած էինք ճանապարհին նորանոր փայլերէ շացող բնական հետաքրքրութեամբ, յոգնած եւ զմայլած ներս կը մտնենք վանքի արեւմտակողմի առաջին դռնէն. առաջին դռնէն բաց է, գլխիբաց եւ խաչակնքելով ներս կ'երթանք. ապշութիւն մը կը պատէ զմեզ. ձայն մը կը լսենք. նըւաղկոտ մի ձայն որ կ'երգէ շարունակ մի մի եւ նոյն եղանակաւ. ո՛չ քաղցր կրնա զատել եւ ո՛չ փոխ, ո՛չ մաղթանք եւ ո՛չ շարական, ամենն ալ մէկ ձայնով կը կարգայ. մենք կ'աղօթենք եւ երկիւղածութեան հետ ապշութիւննիս ալ կը զօրանայ.

Արձանացած կը նայինք. հոյակապ տաճարի աջակողմեան դասի առջեւ՝ Աննահօր մոխրոտ եւ բեկբեկած աթոռի սլաքառանդանի առնթեր, չոր եւ ապստաղոյն փաթիլի կտորի մը վրայ ծալապատիկ նըստած էր Պողոս վարդապետ. փայտեայ փոքրիկ աթոռի մը վրայ դրած էր ժամագիրքն ու շարական եւ ձիթով ի հողէ մի պարզ ձրագ, առանց ընկերի եւ ոգնականի կ'երգէր «Լուսնի ձայնից մերուց», երեկոյան աղօթից այն սրտաբուխ մաղթանքն, որոյ նորահնար շէշտերուն կը խառնուէր մեր հառաչանք...

Եկեղեցւոյ երգեցողութիւնք վերջացած էին արդէն, ժամասաց կղերի աջն համբուրելով վերին սենեակներէն մին քաշուեր էինք: Ժամը գիշերուան մէկն անցած էր եւ կիսամեկայ լուսնոյ մագիչ լոյսը սփռելով շուրջանակի իր ոսկեգոյն ճառագայթները, գիշերային մեղմաղմիկ լուսութեան եւ վճիտ երկերի վրայ պլլալացող մեծ ու փոքր աստեղց հետ, «կասեկամ» թոչնոյ ընդմիջաբար «Ստահակ, Սահակ» ձեք ձեք կոչման տխրալուր ձայնի խառնուրդով վեհութիւն մը զգեցած էր բնութիւնն ու մեր խմբակը մերթ խօսելով, մերթ երգելով, մերթ ուտելով ու երկար, շատ երկար դիտելով, արբիւ կը բացադանչէինք ձմի սուրբ վայրեր, ազատ ժամեր մեր կենաց եւ:


Գ.

Գիշերն՝ իր մթնշաղ վարագոյրն ամփոփելու աստիճանին կը մօտէր, աքաղաղներն անդադար իրենց հալալէնքները կ'արձակէին, ու աղօթարանի մէջը փարատուելով արուսեակի նախալոյսն հորիզոնի վրայ կ'աճէր. Աննահայր վարդապետը փայտէն սանական կոշնակի առջեւը կեցած երկու մուրձ ի ձեռնի ժամ կը ձայնէր. մայիսի սիրական երգիչների հրեշտակային ալիւն առաւօտեան կենսատու զեփեռի եւ անմահական ծաղկանց խնկաւէտ բուրումների ներդաշնակութեամբ անմահից աշխարհի ուրուականը կը պատկերէին...

Չգետնիս արդէն վրանիս կազմ ու պատրաստ՝ հաղիւ երկու ժամ քուն քաշեր էինք, Աւետեաց երկրին ցանկացող խորագէտն որդւոց նման: Աճապարեցինք վանուց տաճարի աջակողմեան օրմէն վաղը աղբիւրէն լուացուիլ եւ թոթուել ընդ թրքեցոցից ծանր անուրն որ կը փորձէր թաղել պահ մը մեր խանդի հուրն: Եկեղեցին կը մտնենք, Պողոս Հայր Սուրբ դարձեալ մի նակ, տաճարի առջեւ կայնած (դիտմամբ չէր նստած) իր սովորական եղանակաւ կ'երգէր Աջաք առաւօտու ողորմութեամբ քով եւ ցնծացաք առուր կենաց մերոց հոգեզուարձ երգն: Ո՛վ հոգեզուալ երգեր եւ մեզեղիներ, որպիսի՜ գերբնական ձգողականութեամբ հոգին կը վերացնէք եւ ձեր վրասեմութեամբ կազդ ուրելով ու զօրացնելով զայն մարմնական զատութիւնէ, գեղեցկին, բարւոյն եւ ճշմարտին անմահ փառաց պատկերը կը նկարէք ի մարդս այնքան պարզ եւ պայծառ որքան բուռն հաւատոյ կայ եւ յաւիտեականի սէրը զոր կը իրթնացնէ յոր ձեռք մէն մի թեւի զարկը:

Տխուր էին այս առաւօտեան երգիչ շէշտերն եւ մեղմաղմիկ խեղճ Աննահայր ինքնահնար երաժշտութեան ձայներն: Այս աղբեցութեան ներքեւ ի՞նչ յեղաշրջումներ ի մտապատկերներ կը կենդանանային ի մեզ ու մեր յիշողութեան մէջ կը մարմնանային Սրգար, Թագէտ, Լուսաւորիչն եւ Տրդատ:

Սրեւ ծագելէն մի ժամ առաջ՝ առաւօտեան ժամերգութիւնն աւարտած էր, դարձեալ մեր գիշերատեղին կը վերադառնանք. ահա՜ պատուհանի հանդէպ կը տեսնուի շրջակայ գիւղերի եւ քաղաքի ազգայնոց երկու սեռէ խառն խումբերն ոյք նոր դարնան իրենց բոյն վերադարձով աղանեսաց երամբերի նման՝ ուրախ զուարթ երգելով ու չալելով կը դիմեն ի վանք: Որքան ժամերը սահին, ուխտաւորաց այս շղթան կ'առաւելի ու մենք կախարդուած ենք գեղունկ երկտասարդաց մետաքսեայ բաճկոններէն, զբլուխին դրուած գոյն զգոյն էազաններով ու պարսկական կարմիր, կանաչ, սեւ եւ դեղին մետաքսեայ փոշիներէ տեղական ձաշակաւ՝ եւ երկար ու կարճ ծայրերով ու ձոթերով կապուած ձեռն նման փայլուն փոշեղէն (բուլա), ամփոփ կերպով հագուած Սղերդի մազոտ եւ դիպակաւոր կարճաբայն (վերնապեհոտ), ու եւ կարմիր թելերով նախաւած շալաւաքն ու այդ ամենու վրայ կապուած եւ թեքուած գէնքերու մեծ ու փոքր գործիքների շարտոցն, պողովատիկ օրի, արծաթապատ դաշուների եւ ձիւնափայլ շէշաւէի փայլիլուսներէն, նոցա կանանց եւ պարկեշտ օրիորդաց զգեստների դեղին ու կարմիր գոյներէն ու ձեւերէն, քաղաքացիների ձոխ հագուստներէն եւ մեծ տիկնայց շրջագգեստի կերպ՝ տեղական կարմիր կտաւէ ընտիր շապիկներէ, որոց ամենն



իրենց պանդան ձեւերով ու գոյներով երբ
իրար կը խառնուին առաւօտեան զով օդի
հետ, ասիական նախնի դառնալի զաւանայի
ձայներով մեր լսելեաց ու աչաց հիացում
եւ մեր մտաց թռիչ կուտային . . .

Որքան հաճելի է տեսնել նաեւ այս
խնդասիրտ խումբերի բարեպաշտութեան
այն ջերմեանդուծիւնն որ կը մղէ զի-
րենք առ կրօնն եւ ազգութիւնն : Ամեն ոք
իր խմբով տաճարը կը մտնէ. երկիւղած եւ
պատկառ դիմօք կ'երկրպագեն, ուխտեր-
նին կատարելով սիրով կը նուիրեն լուսա-
նին այն նուիրողորմեալ Ս. Նշանին որ
փայտէ պարզ գրականի մը վրայ բացուած
կը մնայ : Մի եւ նոյն պատկառանքով եւ
հաւատքով կը դիմեն Հայաստան աշխարհի
առաջնոց անուանակիր զոյգ ակները՝ զոր
յիշեցի վերեւ :

Ուստաւորաց կրօնական արարողու-
թիւնը կը կատարուի այնչափ մեծ եռան-
դով եւ կանոնաւորութեամբ, որքան մեծ է
Հայաստանցի ժողովրդեան յոյս եւ հաւատքն.
եւ ինչ աւելի հաճողական եւ սիրելի բա-
րեպաշտ գաւառացիին՝ քան կրօն եւ եկե-
ղեցի, սուրբն եւ ուխտատեղի : Մեր ժո-
ղովրդեան կեանքի յարաբերականն է դա :

Մէկ կողմէն այս ուխտաւորութեան ա-
րարողութիւնը կատարողները գերծ իրենց
խղճի խայթէն կը կուտին այն կանանչ մար-
գերի վրայ եւ քնքուշ ծառոց յանկուցիչ
հովանեաց տակն այց շնորհած է գարուն
նոր կեանք, կը խնդին ու խմբուին, տար-
բեր պարտականութեան փափագ մ'ալ կը
զգան : Ո՞վ պարզութիւն եւ անմեղութիւն
կը միանան երիտասարդները, կը հրա-
ւիրեն նուագածուններ ու կը հրամայեն նը-
ւագել (տեղական ոճով քնք) գաւառական
պարերդ — շորոր, շէրվանի, պար, սեճա-
նէօ ևն — ու կը կազմեն պարաշարայի մը
փայլուն եւ խառնուրդ շարք, հանգոյն
մեծ եւ փոքր աստեղատանց համակարգ,
Դրախտատեսիլ այն վայր որ զարդար-
ուած էր բնութեան գեղեցկագոյն պըշ-
րանքով՝ ընդարձակ հանդիսարան էր աշ-
խուժ եւ ժիր շաբաթէրներին, Հոս
կարգաւ եւ խումբ խումբ բազմած էին
տարեւոր կիներ եւ այրեր, երիտասարդ-
ներ եւ չքնաղ կոյսեր, պատանիներ եւ ման-
կամարդ աղջիկներ, ոմանք կը ծխէին, ո-
մանք կուտէին, ոմանք կը կոնծէին, ոմանք
կ'երգէին եւ ոմանք կը սիրաբանէին . . .

հանդիսարանի կեդրոնը կը չալուէր նախ-
նական զաւանայով եւ դառնալի արեւելեան
նախնի եղանակաց կտորները : Եւրօպական
հարիւրաւոր գեղջուկ տղամարդեր, ժիր և
գեղանի հարսներ, համեստ եւ կայտառ
աղջիկներ, խառն ինչպէս տատարակ ու ա-
ղաւիկներ, ձեռք ձեռքի տուած հսկայ պար
մը կը ընդունէին, զեփուռէն տատանուող կար-
միր ու ձեռմակ վարդերի նման, ոտից եւ
ծնկանց, զլսոց եւ թիկանց միակերպ եւ
համակարգ ձոնուներով . ամենն ի միասին
կը խաղային եւ կը խնդային, ցնծութեան
եւ հրճուանաց ժպիտներ ու ձայներ իրար
խառնելով : Այս տեսարանն իր չքնաղ ու
երեւոյթներով կը լրացնէր բնութեան գե-
ղեցկութիւնն եւ կ'ազդէր մեզ անջնջ տը-
պաւորութիւն . . .

Եւ այս մեղապան ժամերն որքան ա-
րագաթօրիչ ունէին թեւեր. ժամ տասն եւ
մէկին կը հասնէր. տակաւ առ տակաւ
մեկնող հանդիսականաց վերջին խմբի հետ,
վերացեալ մ'ըմով, հրաժեշտ տուինք այդ
անմահ վայրին եւ Աւետի Ս. Աստուա-
ծածնայ գոլորտի՝ Տաճարին. զգածմանց եւ
զգացմանց բեռներով դարձանք հոն ուր
սովորութիւն էր մեզ որոճալ մեր հանա-
պազօրեայ տպաւորութեանց վրայ . . . Եւ
այս խնդրոց մէջ անթաթ ընկղմած՝ աղ-
օրեան մտապատկերը գտանք ի մեզ անեղծ
գոյներով խոր տպաւորուած . . .

Լ. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

Յեղէ զիս, կոյս, երբ երկիւղածն Արշալոյս
Հանդէպ արիւնջն պարզէ պալատն իւր շողուն,
Յեղէ զիս, կոյս, մինչ գիշերը՝ խոհանոց
Ընդ իւր վճիռ քողով սահի երազուն .
Ի հրաւեր հաճոյից մինչդեռ քո լանջ տըրփէ,
Եւ երկոյն ստուերն քեզ քաղցրիկ յոռուրջս կոչէ՝

Թաւուտից մէջ ունկնդրէ՝
Ձայն մ'որ մըրմը՝
Ձիս յեղէ՝

Յեղէ զիս, կոյս, մինչդեռ ըզբեղ առ յաւետ
Բաժնէ յինէն ճակատադիւրն անողը,
Տխրասահ ամբ, տարադրութիւն և աղետ
Մինչ թարքամեն սիրտս այս անոյս և անոք .
Խորհէ՛ յիմ սէրն ապաքաղք, յիմ հրաժեշտըն
տրտում .

Փոյթ չէն բնաւ սիրողաց ժամանակն և անջա-
տում :

Յորտփ սիրան իմ տրոփէ՝
Միշտ պիտի ըսէ,
Ձիս յեղէ՝

Յեղէ զիս, կոյս, մինչդեռ սիրտն իմ վշտահար
Յուրտ հողին տակ ընդ միշտ նընջէ անբեւր,
Յեղէ՛ զիս, երբ տխուր շիրմիս ի սննդ
Հանդարտութեն փթթի ծաղիկն մենասեր :
Գուցէ զբեղ ալ չը տեսնեմ, սակայն անմահ իմ՝

Մերթ պիտի գայ հուպ առ քեզ իբրեւ բոյր մի
կաթողին :

Ունկնդրէ՛, մինչ գիշեր է,
Ձայն մ'որ հեծեծէ,
Ձիս յեղէ՝

Ա.Ն. Տ.Ս. ՄԻՒՍԷ Թարգմ. Կ. ԽՕՍՔԱՆՅ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Գ.

Բիւզանդական կայսրութիւնն իւր փայ-
լով յարատեւեց ընդ երկար . սակայն
ժ. Գարու սկզբին սկսու քայքայիլ ա-
րագօրէն : Կիւ Մանուէլ կայսեր (1143 -
1180) մահէն յետոյ Բիւզանդիոնի համար
սկսաւ խռովութեան եւ թշուառութեան
դարեչընթաց : Նորա մանկահաս օրդին Ալէքս
Բ. Գահընկէց լինելով սպաննուեցաւ Անդ-
րոնիկոս Ա. էն, որ իւր խտաբաբոյն-
ութեամբ բոլորովին ատելի և դաւ ժողովրդ-
եան, մինչեւ որ վերջապէս սպաննուեցաւ
հոգեւորականութեան ձեռքով զարհուրելի
մահուամբ : Նորա հետ վերջացաւ եւ Կոմ-
նենոմաներու հարստութիւնն, որի ժամա-
նակի միջոցն (1057-1187) լաւագոյն դա-
րեչընթաց մ'եղաւ Բիւզանդական կայսրու-
թեան համար : Այնուհետեւ Բիւզանդական
գահը բարձրացաւ Իսահակ Անգեղոս, որ
մասնաւոր ատելութիւն ունենալով Հայոց
նկատմամբ, շատ տառապանք տուաւ նոցա
հռոմէականութեան դարձնելու համար .
սակայն բարեպաշտարար գահընկէց եղաւ
իւր Ալէքս Անգեղոս եղբորմէն, Իսահակ
Անգեղոսի որդին, գահաժառանգն Ալէքս,
Բիւզանդական գահը ձեռք բերելու հա-
մար գիւմեց Խաչակրաց, որ ժողովուելով ի
Վենետիկ որոշեցին ծերունաւորդ Դոմ-
Դանդուլոյ առաջնորդութեամբ արշաւել ի
Պաղեստին : Խաչակիրք փոխանակ Պաղես-
տին երթալու եկան եւ յանկարծ տրեցին
Բիւզանդական կայսրութեան : Ալէքս, կայսր
լինելու տեսչէն, Խաչակիրներուն առա-
ջարկեց Բիւզանդիոնի համար բոլորովին
աննպաստ եւ անպատուաբեր պայմաններ :

Խոստացաւ ըստ ամենայնի հպատակիլ հը-
ռոմէական եկեղեցւոյն եւ 10,000,000 Փր.
վճարել Խաչակրաց, բաց աստի յանձնառու
եղաւ նոցա հետ յեղիպոսս զրկել 10,000
զօրք եւ մինչեւ իւր մահն 500 հեծելազօր
պահել Սուրիոյ մէջ, երկրի պահպանու-
թեան համար :

Խաչակիրներն համակերպեցան այս պայ-
մանաց, եւ 1203 յուլիս 17ին, արդէն կը
ռմբակոծուէին Կ. Պոլսոյ ամրութիւններն .
իսկ օգոստոս 1ին երիտասարդ Ալէքս զը-
րաւեց թիւզանդական գահն : Եկեղեցիներ-
էն հաւաքեց թանկագին տնօթիւնն եւ
ժողովուրդը ծանրաբեռնեց անտանելի
տուրքերով : Բիւզանդացիք, յուզուելով,
սպանեցին զ'ա եւ յաջորդ նշանակեցին
Ալէքս Ի. Կայսրն : Այդ միջոցին Խաչակիր-
ները նենգութեամբ զրաւելով Կ. Պոլիսը,
կողովտեցին զայն եւ այրեցին, 1204 ապ-
րիլ 12ին : Այս պատճառաւ աւերեցան բազ-
մաթիւ հիանալի շէնքեր, թանկագին սիւ-
ներ եւ այլ գեղակերտ յիշատակարաններ :

Խաչակիրք Բիւզանդական կայսրութիւ-
նը բաժանեցին իրենց միջեւ աւատական
իշխանութեան : Լատինական այս նոր կայս-
րութիւնը չիրգաւ տեւել ընդ երկար : Յու-
նական իշխանաց ձեռքը մնացած էին մի
քանի գաւառներ, որ կը կազմէին թագա-
ւորութիւններ, որպէս Տրապիզոն, Եպիրոս
եւ Նիկիա : Սոյն վերջինի իշխանը՝ Միքայէլ
Պալէօլոգ՝ ձենովացւոց օգնութեամբ Կ.
Պոլսէն արտաքսեց թշնամիներն եւ վերա-
հաստատեց Բիւզանդական կայսրութիւնը :
Սակայն նորա մահուանէն յետոյ Բիւզան-
դիոն ինկաւ կամոց կամաց եւ ժ. Դ. Գա-
րու սկզբին այս մեծագոր կայսրութիւնը
պարզապէս աւատական թագաւորութիւն
մ'էր Օսմանցւոց իշխանութեան տակ, Մու-
րատ Ա. ժամանակ : Մուհամէտ Բ, Օսման
առաջինէն սկսեալ, օսմանեան եօթներորդ
Սուլթանն, համայն Թրակիոյ տէր լինելէ
յետոյ, վճռեց զրաւել Կ. Պոլիսն եւ բնա-
ջիւղ ընել Բիւզանդական կայսրութիւնը :
Նոյն ժամանակի Բիւզանդական կայսրը,
Կոստանդին ԺԱ. Պալէօլոգ, օգնութիւն
խնդրեց Հռոմի Նիկողայոս Ե մեծագոր Պա-
պէն եւ այլ արեւմտեան թագաւորներէն,
սակայն ամեն կողմէ մերժում տացաւ :
Լքեալ ամենէ, յունական թագաւորու-
թիւնն հարկադրուած էր պահպանել իւր
ազատութիւնն իւր իսկ սեփական եւ ան-
նշան ուժերով : Մայրաքաղաքն իւր հինգ
հարիւր հազար բնակիչներով հազիւ կարճ-
ղացաւ ասպարէզ հանել եօթն հազար զօրք,
ընկերակցութեամբ մի քանի ձենովացի
Վենետիկցի գունդերու, ընդդէմ օս-
մանեան 250,000 զօրաց, առանց ի հաշիւ
առնիլու նաւատորմն, բաղկացեալ աւելի
քան 500 նաւերէ : 1453ի ապրիլին, Սուլ-
թան Մուհամէտ սկսաւ Կ. Պոլսոյ պաշա-
րումը թէ՛ ցամաքի եւ թէ՛ ծովի կողմէ : Կը
կործանէր պարիսպներն աւերիչ մեքենա-
ներով եւ նորագիտ թնդանօթներով : Ո-
րովհետեւ նաւահանգիստն, որ յայտնի է
Ուլկեշէ-ը անուամբ, փակուած էր երկաթի
շղթաներով, այս պատճառաւ կ'ըսեն թէ
Սուլթան Մուհամէտ հրամայեց իւր նաւերը
նաւահանգիստ տանիլ ցամաքէն, ճարպա-
զօծ տախտակներու վրայէն : Կ. Պոլսոյ
պաշտպաններն ոգեւորեալ իրենց կայսեր
օրինակէն — որ կը մարտնչէր հասարակ զի-
նուորի պէս, — հրաշալի քաջագործութիւն
ներ ցոյց տուին : Թուրքերն երկիցս ծանր
կոտորած ունեցան : Վերջապէս հասաւ ճա-
կատագրային օրն յորում Սուլթան Մուհա-

մէտ տարաւ վերջնական յաղթանակը: Կոստանդին այդ պատմական նշանաւոր պատերազմի մէջ ցոյց տուաւ իւր պաշտօնի կատարեալ պարտաճանաչութիւնն. առաջին երեկոյ հաղորդուեցաւ եւ ապա հրաժեշտ տալով իւր ընտանեաց եւ առ հասարակ ամեն մարդու, մեկնեցաւ բանակը: Հետեւեալ օր, այն է մայիս 29ին, Օսմանցիք խուժեցին քաղաքն, եւ սկսաւ արիւնայեղ սոսկալի տեսարանն, որի մէջ, յուսահատաբար եւ կատաղի մարանչելէ յետոյ, ինկաւ Կոստանդին, նորա հետ միասին անհետանալով եւ բիւզանդական նշանաւոր կայսրութիւնը: Սուլթան Մուհամէտի հրամանաւ փնտռուելով կայսեր դիակն, գտան զայն Սուրբ Թիմոնոսի (Թոր-գաբուրի) դրան մօտ, կուրծքի վրայ ընկած եւ խորտակեալ կողերով: Ղինուորները ճանաչեցին զնա իւր ճոխ եւ սեւ արծուենկար կոշիկներէն: Աւանդութիւնը կ'ըսէ թէ Սուլթան Մուհամէտ Կոստանդինի գլուխն յանձնեց Պատրիարքին հրամայելով թաղել փառօք եւ պատուով ըստ յունական ծիսի, և թէ Պատրիարքը զետեղելով զայն արծաթեայ տապանի մէջ թաղեց Ս. Սոփիայի տաճարի մէջ սեղանի տակ: Իսկ մարմինը, կ'ըսեն, Յոյն մ'առնելով գաղտնապէս տարաւ թաղեց Ս. Թէոփոսիոյ Եկեղեցւոյն մէջ, որ այժմ կ'անուանուի Կիւլ Ճամի, որոյ մասին պիտի խօսինք իւր կարգին:

Դ.

Երեւելի անձ մ'որ երկար տարիներէ ի վեր ուսումնասիրած է Արեւելքն եւ մասնաւորապէս Պաղեստինն, այս վերջինի նշկատմամբ ըսած է հետեւեալն. «Պաղեստինն երգուած, նկարագրուած եւ ուսումնասիրուած է ընդարձակօրէն, այնուամենայնիւ թերակատոր: Այս խորիմաստ խօսքը կարելի է ամբողջովին վերագրել եւ Կ. Պոլսոյ, որի գեղապաշարէն թէեւ նմանապէս նկարագրուած, ուսումնասիրուած է հին ու նոր պատմաբաններէն, բանաստեղծներէն եւ ուղեւորներէն, այնուամենայնիւ միշտ թերակատար զի նորա հրաշալի եւ ակնապարար տեսարան, իւր համայն սքանչելութեամբ, անկարող են նկարել ոչ հանճարաւոր գրագէտի գրիչն եւ ոչ նկարչի վրձինը: Այլ պէտք է անպատճառ տեսնել Կ. Պոլսն, ըմբռնելու և զգալու համար նորա շքեցունքն եւ շքեղ գեղեցկութիւնը, նորա դիւթական համայնապատկերը:

Ով կազմած չէ ճշմարիտ գաղափար քեզեցիկի մասին — այս բառի կատարեալ նշանակութեամբ — թող գայ դիտել Կ. Պոլսն ամբար. արշալոյսի ժամանակ Մարմարայի կողմէն, Գատրիգիւղի եւ Ֆէնէք պաղ-չէի ափերէն, իսկ օրուան եւ տարուան միւսվիշտ թող երթայ Բերայի բարձունքն եւ այն տեղէն իւր հայեացքն արձակէ Սիւստարի եզերաց եւ Ոսկեղջիւրի հրաւանդանի վրայ, եւ Սքամբուլէն թող դիտէ Թօփհանէն, Բոսփորի խորքն, եզերապատ գիւղերն, Սքաւրոզամի բլուրներն եւ հողմաւտեալ ընկած բարձունքներն ի հնուց սովորութիւն եղած է ըսել թէ Կ. Պոլս որ այնքան զմայելի է իւր արտաքին տեսարանով, ընդհակառակն ներքնապէս չափազանց սգեղ է իւր նեղ եւ աղտոտ փողոցներով, նմանապէս եւ իւր այլակերպ էներգիով: Գրութեանց եւ խօսակցութեան մէջ այժմ եւս իրր ճշմարիտ իրողութիւն կը հաստատուի այս, սակայն բաւական սխալ կարծիք մ'է, զի Կ. Պոլս ոչ նուազ նկա-

րագեղ է ներքին կողմէն: մանաւանդ այժմ ամենեւին շնորհիւ 20-25 տարի առաջուան Կ. Պոլսոյ, եւ այս բանի մէջ հանգուելու համար հարկ է ուղարկութեամբ անցնիլ Սքամբուլի, Տէփլիս, Երասխայի, Երզնկայի, Կարսի միջեւ: Այդ բանապարտ գաղափարն, չըջագայել Կէտիկ-փաշայի, Գուսթաբուրի, Յէնի-գաբուրի նորակառոյց հայաբնակ թաղերն եւ մանաւանդ Բերա, որք իրենց շէնքերու գեղեցկութեամբ յետ չեն մնար շատ եւրոպական քաղաքներէ: Իսկ այն ընդարձակ հրապարակներն, որ կը շրջապատեն Սուլթանական մզկիթներն, Մահմետականաց գերեզմանատուներն, իրենց մշտականաչ հոծիններով շքեղութիւն եւ վեհապաշտութիւն կազմեն մարդու, եւ Բոսփորի ոլորտապայտ ափերն, ամբողջ երկայնութեամբ, Պէշլիք-տէքէէն մինչեւ Թօփհանէն իրենց գեղակերտ շքեղ ու ծառազարդ պարսերով եւ պալատներով կը պարարեն մարդու աչքերը ցերեկն իրենց համայնապատկերով իսկ գիշերը միլիոնաւոր անշէլ լոյսերով, որ կը ներկայեն կատարելագոյն դիւթական տեսարան մը, հրեղէն անթիւ սիւներ կազմելով Բոսփորի եւ Ոսկեղջիւրի ջուրերու մէջ: Սակայն եւ այնպէս այս հակիրճ նկարագրութիւն եւ այս փայլուն բառեր, իրենց փայլունութեամբ հանդերձ անկարող են բացատրել Կ. Պոլսոյ գեղեցկութիւնն եւ փայլը:

Պէտք է աչքով տեսնել...

Ճշգրտոյն հաշուով, Կ. Պոլս կ'ընկնի Փարիզի միջօրէակի 41°, 1', 27" հիւսիսային լայնութեան եւ 28°, 55' արեւելեան երկայնութեան տակ, որմէ կը հետեւի որ Կ. Պոլսոյ ամենէ երկայն օրն եւ ամենէ երկայն գիշերը կը տեւէ զրեթէ 13 ժամ: Կ. Պոլսն, այսինքն միայն Սքամբուլը կը գտնուի հրաւանդանի մը վրայ. արեւմուտքէն դէպ ի արեւելք ցցուած է ծովի մէջ անկանոն եռանկեամբ: Սոյն եռանկան կը գրաւէ 12 3/4 միլոն տարածութիւն եւ կը ճիւղաւորի հինգ բլուրներու, որով եւ նոյն իսկ քաղաքն երբեմն կը կոչուէր պարզապէս Եօֆուսթիէս: Առաջին բլուրն որ կը կազմէ հրաւանդանի եւ քաղաքի արեւելեան անկիւնը կ'ամրոպէ Սուլթանական պալատը կառուցուած հին բիւզանդական վերնաբերդի տեղն, ուր է միջնաբերդն, Սյա-Սոփիա, Հիպոպոլիտոն (Սթ-մէյտանը) եւ Սուլթան-Ահմէտի մզկիթն: Երկրորդ բլուրը կը պարունակէ Կոստանդինոս Մեծի ֆրոնթոն (հրապարակն) — արդի Թուրք Բուրն — եւ պորփիրէ հաշակաւոր սիւնն, որ այժմ կ'անուանի Չէմպէլըլի-թաշ: Բացի այս, երկրորդ բլուրն իւր մէջ կ'առնու եւ այն տարածութիւնն որ կը ձգուի Եօֆուսթիէս մինչեւ Պաղա-բազար: Երրորդ բլուրը կը պարունակէ իւր մէջ Էսկի-սարայը, Սիւլթանական թաղի եւ Պաշայի մզկիթներն եւ վերջապէս Վաղենտինոսի ջրանցքը: Չորրորդի վրայ կը բարձրանայ Սուլթան Մահմետի մզկիթն: Հինգերորդ բլուրի բուն կատարը կառուցուած է Սուլթան Սէլիմի մզկիթը վերերորդի վրայ Թէքի-Սարայն. իսկ Եօֆուսթիէս, որ կ'անուանէր Կոնստանդինոս, ամենէ ընդարձակ բլուրն է եւ ունի 12,000 ոտք տարածութիւն. Եօֆուսթիէս բլուրն ի մէջ այլոց կը պարունակէ բիւզանդական ժամանակէ նշանաւոր արկաղեան սիւնը:

Պ. Տ.

Է Ֆ Է Ն Տ Ի Ն

(3)

(ՆՈՐԱՎԵՊ)

Գ.

Սմաուան մը մէջ աղջիկուես, նշանուուութիւն եւ հարսանեաց հանգէս, ամէն բան կատարուած էին: Թշուառ Զապէլ թողած էր տանջարանը՝ մտնելու համար թիւրան մը ուր դժբաղդութեանց եւ աղէտից երկար ու ծանր մի շղթայ կ'սպասէր իրեն:

Որչա՛մ արտասուած էր Զապէլ այդ ամառան մէջ եւ արտասուք քանի՜ հալեցուցած էին զինքն: Թէպէտ լաւ չէր ճանչնար Միհրանիկն, իւր ամուսինն, այլ ակառկ հասած նորա մի քանի քստմնելի պատմութիւններն ու շահատակութիւնները բաւական եղած էին ճանչցնելու այն անձն, զրկարաց կը դիմէր իրեն ոչինչ չէր կրցար ըսել թէ՛ իւր հօրաքրոջ եւ թէ՛ Պաղտատայ աղայի: զիտէր թէ իրենց պատասխաններ որչափ կծու ու կոշտ պիտի ըլլային եւ այդ աղաչանք ու պաղտատանք հակառակ արդիւնք յառաջ բերելէ զոտ ուրիշ բանի չպիտի կարենային ծառայել:

Այլ տեսնէր դժբաղդութեանց անդունդ մը ու ցաւոց ովկէան մը. կ'առաջարկէին կը հրամայէին իրեն թաղուիլ այդ անդունդի, խեղդուիլ այդ ովկէանի մէջ, առանց ճիշդ կամ հառաչ մ'իսկ արձակելու:

Զապէլ՝ արդարեւ մտած էր այդ թիւրանէն ներս լուռ ու տխուր իւր հօր քոց աչեր՝ մարած, իւր բոսորագեղ այտի կանուխէն դարձած, կը պատրաստէր նորէն կրելու իւր անգութ ճակատագիրը՝ ծանրածանր հարուածներն:

Այո՛, հարուստ էր Գասպար աղա, գէայդ պէս ճանչցուած էր. այլ չէր կարող մըռնել թէ այդ հարստութիւն ինչ օգուտ կրնար ունենալ իրեն համար երբ Միհրանիկ, այդ սոսկալի գազանն, իւր ժանիքի բացած պատրաստ էր յօշոտելու իւր առկնեւուած ամենախոշոր պատասխաններն իսկ: Միհրանիկ, հաւատարիմ իւր սակարկութեան, պատկազրութենէն ժամ մ'առաջ գրպանած էր 400 ոսկիներն, զորոհայրն իւր չորցած աչերէն քամած արտասուքներով թրջած լեցուցած էր իւր փին մէջ:

Տարօրինակ ուրախութիւն մը տեսնուած էր Միհրանիկի դիմաց վրայ. կը փայլէին իւր աչեր՝ ուր որոշակի կը տեսնուէր մի արեւնաների յատակագիծ որոյ պիտի հետեւէ ընդ հուպ:

Դժուար էր իւր ծնողաց համար բացատրել այդ ուրախութեան շարժառիթը, պատկառելի գուժար մը կը թափուէր իւր ձեռաց մէջ եւ թանկագին գոհար մը կը յանձնուէր իւր գրկաց. ո՛րն էր արդե՞ր այդ ուրախութեան պատճառը, գոհարը թէ՛ գուժարը:

Մի քանի օրեր եւս, եւ ահա ամէն ինչ պիտի յայտնուէր:

Ամուսնութեան առաջին ամիսն, այդ քաղցրութեան եւ հեշտութեան ամիսը, կիսովին չէր բոլորած տակաւին, Միհրանիկ երկու գիշերներէ ի վեր բացակայ էր տնէն եւ դիւրին է երեւակայել թէ տըրտմութեան ու տխրութեան թանձր մշուշ այդ վայրկենէն պատած էր տանը մթնոլորտը:

Զապէլ կ'արտասուէր, կեսուրը չէր կտ-

բող ցամբեցնել նորա ընտելալ աչքին եւ Գասպար աղա որտաբուղիս հառաչանքնե-
րով միայն կը յայտնէր իւր վիշտն ու ցա-
ւերն :

Ո՞ր էր Միհրանիկ . արկածի մը զո՞ն
եղած էր թէ իւր անուրի կենաց պիղծ յի-
շատակներն առաջնորդած ու սուղած էին
զինքն վերստին անբարոյականութեան ճա-
հիճնեալ խորն :

Երկասյրի սուր մը կը խոցէր Գասպար
աղայի սիրտը , Զապէլ եւ իւր 400 հատիկ
ոսկիները կորստեան մատնուած էին . Միհ-
րանիկ անտարակոյս , եթէ ոչ ամբողջովին ,
գէթ այդ գումարի կէսը թափած էր լը-
պիրշ գրկաց մէջ :

Սրդ արեւ երկու օր յետոյ կը դառնար
Միհրանիկ , կատաղած վայրի գազանի մը
նման եւ պատրաստուած յօշոտելու իւր
ճանկերու մատնուած զժրաղէ բոսերն . ոչ
ոք կը համարձակէր խօսիլ , ոչ ոք կ'իշխէր
հարցնել այդ բացակայութեան պատճառն
ու կ'անցնէր այդ գիշերն մութ ու տխուր ,
ինչպէս Զապէլի եւ Միհրանիկի ծնողաց
սրտերն :

Հետեւեալ առաւօտուն Գասպար աղա
տանձին կը խրատէր Միհրանիկին , ըստ կա-
րելոյն քանակով բացատրել թէ ո՞րչափ
արտասուած էր զժրաղէ Զապէլն եւ թէ
ինչ ծանր մտահոգութեանց մատնուած :

Այդ աղէխարը նկարագրութիւնը բնաւ
աղղեցութիւն չէին ունեցած Միհրանիկի
վրայ . նա անդադար , իւր արիւնալից ա-
չքն աստ անդ դարձնելով , կը յայտնէր
կարի անհամբերութեամբ թէ այդ պիտի
բարոյ մը բնաւ անորոշելի չէր իրեն հա-
մար :

Գասպար աղա երկար եւ քաղցր խը-
ղատներէ վերջն .

— Ե՛յ տղա՛ս , ըսաւ , սեսնենք ե՞րբ գոր-
ծի պիտի սկսիս :

— Ի՞նչ գործ , պոռաց Միհրանիկ , գոր-
ծի սկսելու համար ստակ պէտք է . կուտ
մ'անգամ չէ մնացած քովս :

— Հապա այն 400 հատ ոսկիներն . . .
ըսաւ Գասպար աղա եւ այլ եւս չէր կա-
րող շարունակել . նուազեալ ինկաւ բազմո-
ցին վրայ եւ Միհրանիկ այդ առթիւն օգուտ
բաղելով եւ հուր ու բոց թափելով իւր ա-
չքէն , հեռացաւ առանց Զապէլի կամ իւր
մօր հետ խօսք մը փոխանակելու :

Զապէլ՝ Միհրանիկի մեկնելէն անմիջա-
պէս յետոյ , Գասպար աղայի սենեակը մը-
տաւ , ուրկէ միայն աղէխարը ճիշ մը կարելի
եղաւ լսել . կեսուրը , տիկին Մաքրուհի ,
վաղեց իսկոյն եւ սոսկալի տեսարան մը
պարզուեցաւ իւր աչաց . Գասպար աղա
բազմոցին վրայ եւ Զապէլ՝ քիչ մը հեռուն
փռուած էին . հազիւ կը շնչէին երկուքն
ալ . սպիտակ փրփուր մը Գասպար աղայի
բերնէն դուրս կը թափէր եւ Զապէլի ծիւ-
նագեղ ու դալկահար դէմքը տախտակամա-
ծին վրայ կը փայլէր : Տիկին Մաքրուհի՝ խե-
ղայեղ՝ օգնութեան կանչած էր իւր դուռ-
ցիներն որք հարկ եղածը չէին զնայած . բը-
ծիլ մը կանչուած էր իսկոյն որ Գասպար
աղայի մարմինը բնեկէ եւ վերջնականա-
պէս այս աշխարհէս հեռացած ըլլալն յայտ-
նեկէ զատ զժրաղէ քաբար ոչինչ չէր կարո-
ղացած ընել . մինչեւ բժշկին ժամանումն
Դրացիք ու դրացուհիք յաջողած էին Զա-
պէլն սթափեցնել եւ հեռացնել այդ տխուր
սենեկէն որ սակաւիկ մի եւս իւր գերեզ-
ման ալ պիտի ըլլար :

Նրեկոյն , կարծես բնաղդում մը տուն
կը մղէր Միհրանիկն ժամանակէն քիչ մ'ալ

կանուխ , կը զարնէր տանը դուռն իւր սո-
վորական կատաղութեամբ եւ ներս կը
մտնէր կարծես վրէժ մը լուծելու նպատա-
կաւ :

Տանը մէջ գտնուած բազմութիւնն եւ
Զապէլի ու իւր մօր աչքէն թափած ար-
տասուաց հեղեղներ՝ կ'աւետէին իրեն պար-
զապէս թէ հասած էր իւր նպատակին որում
կը բաղձար տարիներէ ի վեր եւ թէ վեր-
ջապէս կրցած էր դահլիճն ըլլալ այն թըշ-
ուառին որ կեսնք չնոսհած էր իրեն :

Մտաւ սենեակէն ներս եւ այն փրփրա-
խառն արիւն որ տակաւ կը հոսէր իւր հօր
քթէն ու բերնէն , մարեց իսկոյն իւր կա-
տաղութեան հուրը . գո՛հ էր , իւր փափա-
գանաց լրումն էր այդ . մի քանի կոկորդի-
լոսի արտասուք տեսնուեցան իւր ժանտա-
ժուտ դիմաց վրայ , որք սրտի ուրախու-
թեանէն սկսած էին այրիլ , եւ շագիւցան նոյն
հետայն :

Հետեւեալ օրը կատարուեցաւ յուրա-
կաւորութեան հանդէսն եւ խոր թաղեցին
խեղճ Գասպարն իւր ցաւոց հետ :

Գ.

Այդ ճանչնալ Զապէլը , բայց չէք ճանչ-
նար տակաւին Սաթիւիկին . հապիւ քան
տարեկան , փայլեալասակ ու բարեճեւ կոյս
մ'է նա . երկայն ու թուխ մազեր կը ծած-
կեն իւր զիտերն , եւ սեւ աչքեր , մուր մուր
յօնքեր կը փայլին իւր մարմարեայ դիմաց
վրայ . իւր նայուածքն առանձնայատկու-
թիւն մ'ունի զոր չեմ կարող բացատրել .
անմեղ , անխաղախ մի հայեցումաճք . կար-
ծես իւր փափուկ ու անկեղծ սիրտն հանգ-
չած է հոն՝ այդ փայլուն ապակիներու ե-
տեւ , եւ ամէն օր կրնայ կարգաւ նորա սրտի
մէն մի թերթերը :

Արուստած է իւր հայրն եւ մայր մ'ունի
միայն . կ'ապրի փոքրիկ տնակի մը մէջ եւ
կ'աշխատի իւր մօր հետ ճարելու համար
օրապահիկն : Իւր ուսմունքն ու կրթու-
թիւնն ստացած է աղգային վարժարանի
մը մէջ . այլ այդ կրթութիւն իւր հօր մահ-
ուան պատճառաւ թերի մնալու է դատա-
պարտուած :

Մի քանի օրերէ ի վեր դժնեայ դիմօք ,
այլ վայելուչ հաջողութեամբ երիտասարդ
մը կը յաճախէ Սաթիւիկի տնակն . ո՞վ է
այդ երիտասարդը , թաղին մէջ ոչ ոք չի
ճանաչեր զայն եւ ամէն օր ազատ է են-
թաղութիւններ ընել : Այդ մի քանի օ-
րերու մէջ կատարեալ կերպարանափոխու-
թիւն մը կրած է այդ տնակն . հոն՝ ուր
երբեմն հազիւ մի նուազուն լոյս կը նշար-
ուէր , այժմ լուսեղէն քա՛հ մ'է որ կը վառի
կարծես , տխուր հառաչանայ յաջորդած են
ցնծութեան երգեր ու պարեր , դժուար չէ
նշմարել Սաթիւիկի դիմաց վրայ մի արտա-
սովոր ուրախութիւն . իւր տժգոյն այժից
վրայ տակաւ առ տակաւ սկսած են փըթ-
թիլ բոսորագեղ վարդեր , զուարթ է , զը-
րեթէ միշտ կ'երգէ ու կը պարէ թեթեւօտն ,
կը հազուի ու կը զարդարուի հարսնագեղ
եւ այժմ ադոնք են միայն իւր զբաղմունք-
նա որ հազիւ մի սպիտակ եւ մաքուր չա-
պիկ եւ մի պարզ , գրեթէ գեղջուկ շրջա-
զգեստ ունէր ծածկելու համար իւր կճեայ
ու գիրուկ մարմինն , այժմ կրնայ մրցիլ
նոյն իսկ բարձրագոյն դասի պատկանող
գեղանի ու գեղալար օրիորդաց հետ : Ի՞նչ
է այս , կը հարցնեն իրարու ամէն թաղե-
ցիք եւ տարբեր մեկնութիւններ կը լսուին

տարբեր բերաններէ : այլ մեծամասնութիւ-
նը կ'որոշէ եւ իւր վերջնական վճիռը կ'ար-
ձակէ ընդ հուսի :

« Այդ երիտասարդը Սաթիւիկի տեղն է »
Բայց այդ որչափ ալ վճռական ու վերջ-
նական ըլլայ արանց համար , կանայք բնաւ
գո՛հ չեն մնար այդ շարիով եւ կը փափագին
զոհացնել իրենց բնական հետաքրքրու-
թիւն մանուածապատ հարցումներով :

Այդ հարցումներ կամ հարուածներ ա-
ւելի կ'ուղղուին Սաթիւիկի մօր . խեղճ կի-
նը վարանոտ հազիւ կարող է երկու խօսք
արտաբերել . իւր գոյնն աւելի պերճախօս
է քան իւր բերանն :

« Հեռուոր աղգական մ'է » կը սլառաս-
խանէ միայն եւ հեգնական ու կասկածոտ
ժպիտներ կը թռչտին ամէն կողմ :

Սաթիւիկ , թէպէտ պարզամիտ մի կոյս ,
այլ կէտ առ կէտ կը հետեւի իւր մօր ուղ-
ղութեան եւ թուրթալի պէս կը կրկնէ ինչ
որ մայրը սովորեցուցած է իրեն :

« Հեռուոր աղգական մ'է » կը սլառաս-
խանէ շարունակ իւր ընկերուհեաց , որք
երբեմն կը յանգգնին ըսել թէ՛ կը ստէ
յայտնապէս . « Կ'երգնուի որ հեռուոր աղ-
գական մ'է » կը կրկնէ եւ քրտանց խոշոր
պղպղակներ դուրս կը ցայտեն իւր լուսա-
գեղ ճակտէն , կարծես բոցօրեղու համար
այդ բացարձակ ստուծեան դէմ :

Այլ ինչ որ ալ ըլլայ , գո՛հ է Սաթիւիկ ,
վերջին ծայր գո՛հ . արդէն մտադիր են թո-
ղուլ այդ փողոցն՝ որ իւր գեղեցիկ եւ զար-
դարուն շրջագգեստներու համար շատ նեղ
է , եւ այդ նսեմ յարկն՝ իւր բարձր կը-
րուկներու համար շատ խոնարհ :

Եւ ինչե՛ր չերեւակայեր Սաթիւիկ . քիչ
ատենէն պիտի ունենայ ամուսին մը հա-
րուստ . գեղեցիկ գլխարկի ու ճոխ շրջա-
զգեստի տենչանք չպիտի հաւեցնեն զինքն .
եւ ամէն հաճոյք ու ամէն երջանկութիւն
իրեն կ'սպասեն այլ եւս : Ո՛հ , չափազանց
գո՛հ է երբ կը մտածէ նաեւ թէ իւր տա-
րաբաղդ ու սիրելի մօր երջանկութեան
պսակն եւս ինքն իւր ձեռքերով պիտի կա-
րենայ հիւսել եւ նա չպիտի հարկադրուի
գիշեր ցերեկ իւր մաշած աչաց լոյսը թա-
փել օրուան հացը-ճարելու համար եւ գէթ ,
իւր կենաց վերջին օրերուն մէջ , պիտի կա-
րենայ հանգիստ ապրիլ ու գո՛հ մեկնիլ այս
աշխարհէս , տեսնելով իւր սիրեցեալ աղջիկն
հարուստ , շատ հարուստ , էֆէնտի մը զըր-
կաց մէջ :

Իրաւ է որ , Միհրանիկ էֆէնտի գե-
ղեցիկադէմ երիտասարդ մը չէ . իրաւ է որ
Սաթիւիկն աւարտած , բայց Նարեկ չէ սկը-
սած . իրաւ է որ իւր վարքն ու բարքն
այնչափ հրապուրիչ չեն մի քիչ փափուկ
եւ նուրբ զգացման տէր մահկանացուի հա-
մար . այլ միթէ երջանիկ ամուսնութիւն մը
յօրինելու կենսական պայմաններ են ա-
ղոնք . միթէ հարուստ չէ՞ եւ հարստութիւ-
նը դարուս ամենամեծ առաքինութիւնն ու
բարեմասնութիւնը չէ՞ . պարտէզ մը չէ՞ այն
զարդարուն ուրկէ կրնայ որ ամէն բարե-
մասնութեանց ու առաքինութեանց գեղա-
տեսիլ ու քաղցրաբոյր ծաղիկները քաղել .
եւ քանի որ հարուստ է , ոսկոյ դէղերու
պարիսպ մը կը պաշտպանէ զինքն . ո՞վ է
այն որ պիտի կարենայ վիրաւորել զայն եւ
իւր գրկաց մէջ գտնուողն . ո՞վ պիտի հա-
մարձակի ըսել իրեն թէ՛ Նարեկ չէ կար-
դացած . ո՞վ պիտի յանգգնի մատնանիշ ը-
նել իւր ժանտատեսիլ դէմքն ու արիւնա-
լից աչքերն եւ ո՞վ պիտի կարենայ նկատո-
ղութեան առնուլ իւր վարուց ու բարուց

մութ ու սեւ գոյներն, երբ իւր փողկապին ու շապկին վրայ կը փայլին խոշոր ու ակնախառն աղամանդներ եւ մէջքն ու մատները կը ծածկեն սակւոյ փայլուն շղթաներ ու օղակներ:

Սաթինիկի դրացիք ու բարեկամուհիք թո՛ղ շարունակեն ըսել ի՛նչ որ կ'ուզեն. երբ սիրտ մը ծածկուած է աղամանդներով զայն հարուածելը կամ վիրաւորելը խիստ դժուար է, եթէ ո՛չ անկարելի. աղամանդի արտակարգ կարծրութիւնն որո՞ւնչէ ծանօթ եւ ո՞ր սայրասուր սլաք կրցած է թափանցել զայն . . .

Միհրանիկ ու եւ է գրաւմունք եւ գործ չունի իրեն համար. օրուան երկարագոյն ժամերը կ'անցունէ Սաթինիկի հետ եւ սովոր է երեկոյեան դէ՛մ, ժամը 10 կամ 11-ի միջոցները, թողուլ Սաթինիկն ու տնակն եւ իբրեւ ջերմեւանդ ու բարեպաշտ հաւատացեալ Բագոսի, փութալ իւր նուիրական պարտականութիւնը կատարել մերձակայ տաճարներէն միոյն մէջ:

Քիչ օր է որ մտած է Ս. . . գիւղ, այլ յաջողած է կարճ միջոցի մէջ շահիլ բազմաթիւ բարեկամներ, գեղեցիկ բացատրութեամբ մը օղիի բարեկամները զորս ամէն ոք կրնայ շահիլ բաժակ մը օղիով եւ որոց շատերու արժանիքն, հարկ չէ ըսել, շատ անգամ բաժակ մ'օղիէ աւելի չէ:

Այդ տաճարի մէջ մի քանի ժամեր անցնելէ եւ նորանոր բարեկամներ ստանալէ վերջ, կը դառնայ տուն տըօլի շողիներու ազդեցութեան ներքեւ. աչքերը սովորականէն շատ աւելի կարմիր, այտերն ուռուցիկ, քայլերն անտոյգ, նայուածքն անորոշ եւ ժահ՝ բուրբուրող այդ տաճարի բուրբուրէն, իւր բերնէն, կը մտնէ տանը դռնէն ներս:

Երկուքէն մին, եթէ սովորականէն շատ աւելի ջերմեւանդն գտնուած է, կը թաղուի անկողնոյն մէջ ողջոյն գիշերն ալ ապաշխարհելու: Գոհ է Սաթինիկ. իսկ եթէ սովորական ջերմեւանդութեամբն է աղօթած, կարծես գիշատիչ եւ սովալուկ գայլ մ'է որ կը մտնայ փորախի մը մէջ անսեղ ոչխարներն յօշոտելու: Ոչ թշուառ Սաթինիկի արտասուքը կը զօրեն մարել նորա կատաղութեան հունքն եւ ո՛չ իւր մօր աղօթքն ու աղաչանք կը բաւեն ցածուցանել աւերիչ մրրիկը:

Վարտասուէ Սաթինիկ, կ'աղօթէ իւր մայրն. ահա ի՛նչ որ կրնան ընել միշտեւ որ էֆէնտին՝ չնչսպառ եւ ուժասպառ՝ նետուի անկողնոյն եւ Մորիէնոսի գրկաց մէջ:

Տխուր է Սաթինիկ, այդ փոթորկալից ժամերէ վերջն ալ կ'արտասուէ յորդառատ եւ ցաւելով կը ցաւի թէ անխառն երջան կու՞թիւն չկայ աշխարհի մէջ:

Ահ, մայրս, կ'ըսէ հառաչելով, եթէ այս գէշ բնաւորութիւնն ալ չունենար էֆէնտին, միթէ չէ՞ր կրնար ինքզինքն աշխարհի երջանկագոյն արարածներէն մին համարիլ. այլ, աւա՛ղ, առաւօտեան ոսկեղոյ արշալուսոյն տխրող մօթը կը յաջորդէ միշտ, ինչպէս Միհրանիկի սիրոյն՝ սուրն եւ գլուխն ունայ՝ հայհոյանքը:

Մայրը կը ջանար սփոփել իւր գաւակն եւ առանց դժուարութեան կը յաջողէր յայդ մ:

Ինչո՞ւ չուրաս, աղբիկս, կ'ըսէր պաղ արեամբ մը, ես հազարներով տեսած եմ այդ տեսակ կտրիճներ՝ որք ամուսնանալէ վերջը բոլորովին սուրբ դարձած են. Ս. պապին շնորհքն անոր ոտքը խաղաղութենէն ալ կը կտրէ, գինեւորներն ալ դու հոգ մի տանիր, ըսածս մտիկ ըրէ:

Մօրն այդ խօսքերն այնչափ լաւ տպաւորութիւն եւ նպաստաւոր ազդեցութիւն մը կ'ընէին Սաթինիկի վրայ որ իսկոյն կը մոռնար ամէն բան եւ պարզմտութեամբ մը «Իրա՞ն կ'ըսես, մայր» կ'ըսէր իւր մօր ու կը շարունակէր իւր փորձարտեայ արտասուքներով թրջել իւր այտերն ու թաշկիւնակն: Ուրախութեան եւ գոհունակութեան արտասուք էին այդ վերջինները:

Կարելի չէր նկարագրել Սաթինիկի ուրախութիւնն ուրբաթ եւ կիրակի օրերը, մանաւանդ երբ հարսի կամ հարսնետօրի մը մը պէս զարդարուած, էֆէնտին հետ կը դիմէր մերձաւոր եւ երբեմն ալ հեռաւոր զբօսանաց վայրերն. ամէն հասարակաց պարտիզի մէջ եւ մասնաւորապէս Պէպէքի ու Պէշիկթաշի պարտէզներու մէջ կը տեսնուէր նա յաճախ, Միհրանիկի հետ թեւ ի թեւ ու կրթնած անոր զերգ վարդերի մ'իւր ցուպին: Միհրանիկ, իւր խոժոռ ու դաժան դիմօք, կատարեալ հակապատկեր իւր ընկերակցին, սէգ ու հպարտ քայլերով կ'անցնէր բազմութեան մէջէն եւ իւր ժանգոտած աչքերով վերջին ծայր գոհունակութեամբ եւ խորխորութեամբ կը դիտէր ամբողջ՝ որոյ հայեցումածք ուղղուած էին առ Սաթինիկ՝ զերթ մաքնիս առ բեւեռական աստղն: Մերթ ընդ մերթ թեթեւ կծկում մը կը տեսնուէր Միհրանիկի դիմաց վրայ, կարծես ժպիտ մը, երբ Սաթինիկ իւր քաղցր ու ներդաշնակ ձայնիւ, թեթեւ ու շնորհագեղ շարժումներով կը խօսակցէր իրեն հետ սոխակի մը նման: «Որչա՛փ ալ չեն վալլեր իրարու» կ'ըսէին շատերն եւ Միհրանիկ հոն կեցած՝ կարծես կ'ուզէր հասկցնել ամէն անոնց որք տակաւին չէին սովորած թէ՛ հարուստներն որչա՛փ անվայել բաներ կրնային վայելցնել իրենց . . .

Այդպէս կ'անցնէին, գրեթէ շարունակ, ուրբաթ եւ կիրակի օրերն եւ երեկոյին ուշ տունն կը վերադառնային տուն գոհ եւ զուարթ:

(Շարունակէ)

ԹԱԼԻԼԵ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Յուլիս 3-էն Յուլիս 10

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Բոլոր մեծ Տէրութիւնք սլաւաստանեցին Բ. Դրան վերջին շրջաբերականին ի մասին Քաղաքիկ իշխանին Պուկարիոյ իշխան ընտրուելուն: Գերմանիա, Աւստրիա, Իտալիա եւ Անգլիա գրեթէ համահաս ծանուցագրեր ուղղած են սա հիման վրայ՝ թէ աւելի շահաւոր է սլուկարական խնդիրը լուծել Պերլինի Դաշնագրոյն տրամադրութեանց համաձայն: Ռուսիոյ առարկութիւններն յայտնի են արդէն. իսկ Ֆրանսա պատասխանած է թէ ինք բնաւ առարկութիւն մը չունի Ֆէրտինանտ իշխանին անձին նկատմամբ, այլ սակայն չի կրնար ընդունիլ որ Պուկարիոյ իշխանն ընտրուի ժողովէ մը որ Բուլղարիոյ երեսփոխաններ կը պարունակէ իւր մէջ: Ֆրանսա, կը յորէ ծանուցագրիւ, կը փափագի որ օսմ. Կայսրութիւնն անվթար մնայ թէ՛ ի Պուկարիա եւ թէ՛ յեղիպոս:

Բ. Դրանը կարծեաց փոխանակութիւն մը կ'ընէ այս պահուս եւրոպական դահ:

Ինձներէ ոմանց հետ եւ հաւանական է որ յետ այնորիկ նոր ծանուցագիր մ'ալ ուղղէ:

—Լեւոն Ժ. Գ. Պապին եկեղեցական ասպարէզն ընդգրկելուն յիսնամեակին տօթիւ որ մեծ հանդիսիւ պիտի տօնուի ի Վատիկան եւ կաթոլիկ ժողովրդոց մէջ, լուրջ փորձ մը պիտի լինի հաշտութիւն գոյացնելու իտալեան կառավարութեան եւ պապական իշխանութեան միջեւ: Վ'ըսուի թէ առաջին ձեռնարկն Ուպէրդո թագաւորը պիտի ընէ:

—Ֆրանսայի երեսփոխանաց ժողովն ընդունեց մաս մը զօրք առ ի փորձ շարժման վիճակի մէջ գնելու ծրագիրը զոր ներկայացուցած էր պատերազմական նախարարը:

—Ռուս կառավարութիւնն, հետեւելով Գերմանիոյ օրինակին, որ հազարաւոր Լեհեր վաճառած էր բրուսիական Լեհաստանէն, սկսած է վաճառել իւր արեւմտեան գաւառաց մէջ բնակեալ գերմանները: Ռուսիոյ նպատակն է բոլորովին ուռնացնել իւր արեւմտեան գաւառներ ուր գերման տարրը զօրեղ արմատներ ձգած է:

—Նաթալի թագուհին յուլիս 1-ին Պէշկերատ վերադարձաւ գահաժառանգ իշխանին հետ եւ յոյժ սիրալիր ու եռանդալիւ կերպիւ ընդունուեցաւ Միլան թագաւորին ու սերող ժողովրդեան կողմէ:

—Բեդերսուրկէ կը հեռագրուի առ Տեպա, թէ աֆղանեան պալատական պաշտօնեայք՝ Էմիր Ապտ-իւլ-Րահմանի դէմ ապստամբելով, անոր աչքերը փորեր հաներ են: Եագուս խան պիտի յաջորդէ եղբ. Ապտ-իւլ-Րահմանի:

—Գերման լրագրիք կը ծանուցանեն թէ բովանդակ գործօն բանակն այժմ զինեալ է բազմահարուածեան հրացաններով: Հետի բանակին սպասարկման բաւել չափ նոր հրացաններ ալ շինուած են եւ մօտոյ կ'սկսի անոնց բաշխումը:

—Վիքոյ որիա թագուհին անցեալ շաբթու Մալգոբրի Մարբիզին Լոնտոնի բնակարանն այցելելով բացառիկ պատիւ մ'ըրաւ իւր նախարարապետին:

Ն Ե Ր Ք Ի Ն

Իգլիկի սլարկական հիւպատոս Յովհանէս խան Կ. Պոլսոյ ընդհ. հիւպատոս անուանուեցաւ, պահելով հանդերձ Իգլիկի հիւպատոսութիւնն: Յովհանէս խան որ արդէն մայրաքաղաքս կը գտնուէր, իւր նոր ու կարեւոր պաշտօնի զուլան անցաւ:

—Գերմանական դեսպան Պ. ալ Բատովիճ անցեալ ուրբաթ Վեհ. Սուլթանի ներկայանալէ յետոյ, յաջորդ օրը, շաբաթ, մեկնեցաւ մայրաքաղաքէն արձակուրդով:

—Տեղացի դրամատեսաց եւ վաճառականաց խումբ մը Առեւտրական եւ Հանրօգու շինութեանց նախարարութեան ներկայանալով առաջարկած են որ իրենց յանձնուի չոգենաւային Շիրքէթի խալիք ընկերութեան մենաշնորհն որոյ պայմանաժամը լրանալու մօտ է: Խնդրարկուք կը խօստանան, ի սէջ այլոց, երթ եւեկութեան այժմեան զնոց վրայ կարեւոր զեղ մ'ընել:

—Հետեւեալ կուսակալական փոփոխութիւնք եղան շաբթուս մէջ:

Գօնեայի կուսակալ անուանեցաւ Պետական Խորհրդոյ անդամ Մէմուտ Պէյ: Պալայի աստիճանաւ. Ատանայի կուսակալ անուանեցաւ Քարբեքլի կուսակալ Հաճի Հասան պէյ եւ նմա յաջորդեց ի Քարբեքլի:

Քեթովա՛նիդ նախորդ կառավարիչ Հաճի Հա-
սան պէ՛յ :

Կետարիդ կառավարիչ անուանեցաւ
Պրուսայի կեղծ. նախորդ կառավարիչ Հայ-
տար փաշա. Պորտուրի կառավարիչ՝ ատաղ-
ձի մաքսատան նախորդ տնօրէն Մուսթա-
ֆա պէյ եւ Եզդլատի կառավարիչ ան-
ուանեցաւ Տպազրական տեսչութեան նա-
խորդ օգնական Նաւիզ Պէյ :

—Հրամանաւ Վեհ. Սուլթանին, կայսե-
րական յանձնաժողով մը կազմուած է ընդ-
նախագահութեամբ Տէրվիչ փաշայի եւ ան-
դամակցութեամբ բարձրատիման զինուո-
րականաց, որ պաշտօն ունի նպաստ հա-
ւաքել այլ եւ այլ գաւառաց սովեալ ժողո-
վրդեան օգնելու համար :

—Եզդլատի օլայմանգիրը չվաւե-
րացաւ. Անգլ. արտասովոր պատուիրակ Սըր
Տ. Ուելթ որ այդ վաւերացման կ'սպասէր,
իւր կառավարութեանն օտացած հրահան-
գին համաձայն, ուրախ իրիկուն մեկնե-
ցաւ Կ. Պոլսէն ուղղակի Լոնտոն ուղեւո-
րելու համար. Այս առթիւ Անգլիոյ երես-
փոխանական ժողովոյն մէջ հարցումներ
ուղղուեցան որոյ պատասխանեց արտա-
քին գործոց խորհրդական Սըր Տ. Ֆէրիս-
թըն՝ թէ Անգլիա չկրնար նուազագիծ զիր-
քի մը ենթարկեալ համարուիլ պայմանագրոյն
անվաւեր մնալէն, թէ պէտք չէ մեծ կա-
րեւորութիւն տալ այդ պայմանագրոյն որ
աւելի զիջողութիւններ բան շահ կը պարու-
նակէ Անգլիոյ համար. Թագուհւոյն կառա-
վարութիւնը պարտք կը համարի (պայմանա-
գիրը վաւերացուի թէ ոչ) զօրաց մեկնումը
չփութացնել կ'ամ չուշացնել հարկ եղած
ժամանակէն աւելի :

Եզդլատի խնդրոյն վերաբերեալ Կա-
ստանի օր բաշխուեցաւ երեսփոխա-
նաց, կը հասնի մինչեւ յունիս 17 եւ բոլորո-
վին նոր բան մը չպարունակեր :

—Շարթուս սկիզբը նախարարական
տաքնաւոր զրոյցներ ելան. Լ. Շէրլըք ծա-
նոյց թէ Մեծ-Եպարքոս Քեթովի փաշա հը-
րաժարական մատուցած էր, սակայն Վեհ.
Սուլթանը մերժելով զայն, հրաւիրած է զՆ.
Բարձրութիւն իւր պաշտօնին վրայ մնալ :

—Հրամանաւ Տպազրական տեսչու-
թեան, թուրքերէն Մէլան շաբաթաթերթը
դադարման դատաւարտեցաւ :

—Ալի Նիզամի փաշա մայրաքաղաքս վե-
րադարձաւ Լոնտոնէն ուր գնացած էր
Վեհ. Սուլթանին կողմէ ներկայ գտնուելու
Վերդուրի թագուհւոյն Յորէլեանի հանգի-
սին :

—Պ. Ալֆրէտ Քրիւք, համանուն զինա-
գործարանի տէրն, անցեալ շաբթու մեռեր
է յիշէն. (Գերմանիա), ի հասակի 78 ամաց,
Հանգուցեալը կը թողու միակ որդի մը որ
կատանձնէ թնդանօթի այդ համբաւաւոր
գործարանի տնօրինութիւնը :

—Ֆէրիք Օսման Սէյֆի փաշա եւ կայս-
թիկնապահ Ֆայիզ պէյ՝ Գոնեա, հեծելա-
զօրաց Ֆէրիք Աբիֆ փաշա՝ Ատանա եւ զի-
նուորական ընդհանուր պիտոյից դեր-նա-
խագահ Միրլիվա Շահին փաշա եւս Էնկիւ-
րի պիտի զրկուին ուր արմաթք եւ նպաստ
պիտի բաշխեն սովեալ ժողովրդեան :

Լա թէ-քէ կը ծանուցանէ թէ Վեհ.
Սուլթանը բարեհաճած է իւր անձնական
Քանձէն հազար հինգ հարիւր ոսկւոյ գու-
մար մը դնել Տէրվիչ փաշայի նախագա-
հութեամբ կազմեալ յանձնաժողովոյ տրա-
մադրութեան ներքեւ, սովեալ անմիջական
օգնութիւն հասցնելու համար :

—Մահմաւ ձէլալէտտին փաշայի իբր

կայսերական պատուիրակ Կրէտէ զրկուիլը
բարերար ազդեցութիւն մ'ունեցած է կըզդ-
ւոյն ժողովրդեան վրայ որոյ մտային գըր-
գուռնն հանդարտած է՝ այժմ Թէ՛ Քոստա-
քի փաշա եւ թէ՛ կայս. պատուիրակն հեռա-
գրաւ տեղեկութիւններ հաղորդած են ի
Կայս. Պալատն եւ Բ. Գուռն, կատարուած
բանակցութեանց նպաստաւոր ելլց վրայ :
Մահմաւորապէս, կուսակալը ծանոց վեր-
ջին օրերս, թէ ընդհ. ժողովոյ քրիստոնեայ
անդամք ետ աւեր են, իրենց նախորդ ո-
րոշումն որով կըզդոյն ժողովուրդը կը հրա-
ւիրուէր տրոյ վճարումը դադարեցունելը Հե-
տեւաբար կրէտական խնդիրը բարուք վ-
ճակի մէջ է :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Վեհ. Մակար Կաթողիկոսն հրաւիրած
է Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Թուրքիոյ
զլխուոր գաւառներէն ինչպէս նաեւ Ռու-
մանիոյ հայաբնակ քաղաքներէն տասներկու
պատանիներ զրկել յէջմիածին, Գէորգեան
ձեմարանին աշակերտելու համար. Այս պա-
տանիք պէտք է 14 տարեկանէն վար եւ 16
տարեկանէ վեր չլինին, համապատասխան
վիճակ մ'ունենան ձեմարանի կանոնաց,
ստացած լինին նախնական ուսումն եւ ի
ձեռին ունենան վկայագիր մ'այն վարժա-
րանէն ուր տոած են իրենց նախնական
ուսումն :

—Վսեմ. Յովհաննէս Էֆէնտի Սպար.
թաւեան նամակ մ'ուղղելով առ Աբե-է-
յայտնած է թէ Ա. Փրիզեան Ազգ. Հիւան-
դանոցի վերաշինութեան մասին Սբե-է-
1051րդ թուով հրատարակեալ խմբագրա-
կան յօդուածը շնորհակալութեամբ կարգա-
լով այս յոյժ կարեւոր եւ օգտակար ձեռ-
նարկութեան նպաստ մը լինելու համար իւր
կողմէ կը նուիրէ հազար օսմ. ոսկի :

—Խառն ժողովն իւր վերջին նստին մէջ
նկատելով որ Տիգրանակերտէ եկած տեղե-
կութիւնը կրօնափոխութեանց օր աւուր
ծաւալիլը կը ծանուցանեն եւ իրաց այս
տխուր կացութեան դարման կը խնդրեն,
որոշեց Տիգրանակերտի այցելու հովիւ կար-
գել Ամեն. Խրիմեան Սրբազանն որոյ ներ-
կայութիւնն ու հոգեւորն խօսքերը տա-
րակոյս չկայ թէ մեծ ներդրածութիւն պի-
տի ընեն կրօնափոխութեանց առաջն առն-
լու համար. Խրիմեան Հայրիկի՝ պիտի միա-
նայ Եղեսիոյ առաջնորդ Գեր. Խորէն ե-
պիսկոպոս Մխիթարեան :

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երեքշաբ-
թի օր. Բ. Գուռն երթալով տեսակցութիւն
մ'ունեցաւ դատական նախարար Վսեմ.
ձէվաէդ փաշայի հետ :

—Ազային ժողովն թէեւ ի նիստ պիտի
գումարուէր այս շաբթու, սակայն երես-
փոխանական ընտրութեանց կատարման
խնդրոյն պատճառաւ յետաձգուեցաւ :

—Վսեմ. Նուրեան Էֆ. ատենապե-
տութեամբ կազմեալ Քաղաքական ժողովն,
որոյ պաշտօնավարութեան սահմանադրա-
կան երկամեայ չրջանը լրացած է, իւր հա-
մարտունութիւնը պատրաստելով Խառն
ժողովոյն ներկայեց :

—Դատական Վսեմ. նախարարը պաշտօ-
նագրով մը Ազգ. Պատրիարքարանին հա-
ղորդած էր Միացեալ ընկերութեանց նը-
կատմութ. Բ. Դրան ինչ ինչ տնօրինութիւն-
ները, Խառն ժողովը նկատողութեան առնը-
լով սոյն պաշտօնագիրը, պատասխանագրով

մը տեղեկութիւն տուաւ առ ձէվաէդ փա-
շա, յիշեալ ընկերութեան կազմակերպու-
թեան ու գործառնութեանց վրայ եւ թը-
ւեց նորա առ Տէրութիւնն եւ առ Ազգն
մատուցած ծառայութիւնները :

—Գոհութեամբ կը ծանուցանենք թէ
Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ երրորդ
կարգի Մէճլիսիէ պատուանշան շնորհել
Հայ հռոմէական երկու բազմադիւն եկե-
ցականաց՝ Վենետիկի Մխիթարեան Վա.
նուց Աբաւայր Կիւրեղեան Հ. Իգնատիոս
Արքեպիսկոպոսին եւ Վ. Էննայի Մխիթար-
եան Վանուց Աբաւայր Այսընեան Հ. Ար-
սէն Արքեպիսկոպոսին : Նոյնպէս, երրորդ
կարգի Օրմանիէ պատուանշան տրուեցաւ
ազգային պատուաւոր վաճառականներէն
Էսաեան Մեծ. Յովհաննէս Էֆէնտիին :

—Վեհ. Կաթողիկոսն՝ Էջմիածնի Ս. Գէ-
որգեան ձեմարանի Աստուածաբանական
գիտութեանց ուսուցիչ անուանեց Վեր.
Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան, առաջ-
նորդ Կարնոյ, որ ստանձնած է այս կարե-
ւոր պաշտօնը, պահելով հանդերձ օսման-
եան հպատակութիւնը : Ն. Գերապատուու-
թիւն այս երկուշարթի օր Կարնիէն ձամբայ
ելած է մայրաքաղաքս գալու համար, ուս-
տից Էջմիածին պիտի ուղեւորի :

—Փաստաբան Թընկըր Սիմոն Էֆէնտի
նամակ մ'ուղղելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր
եւ ծանուցանելով թէ Գուրտեան Կորա-
պետ Էֆ. Կապին եղծանելու համար պաշ-
տօնապէս փոխանորդ կարգուած է, խնդ-
րած է որ այս գործողութիւն Պատրիար-
քարանի չըմանակին մէջ կատարուի որպէս
զի դատարանաց դիմելու տեղի չմնայ :

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Քաղ. Ժո-
ղովոյն յանձնած է սոյն նամակը :

—Շահպազ Կարապետ Էֆէնտի, որոյ
կրկնամուսնութիւնն ու բանագրանքը ծա-
նուցինք նախորդ թուով, իսլամական կրօնն
ընդ ունելու փափաք յայտնած է հետեւեալ
նամական, ուղղեալ առ դատական Վսեմ.
նախարարն, զոր հրատարակած էր Թաքէ

«Վսեմափայլ Տէր,

«Ինչպէս երեւցաւ քանիցս Ձեր Վսե-
մութեան հետ տեղի ունեցած խորհրդակ-
ցութիւններէս, իբրեւ արդիւնք բազմա-
թիւ գրեանց զորս ուսումնասիրած եմ՝ վըճ-
ռական ապացոյցներով ի վաղուց համոզ-
ուած էի արդէն թէ ի վերուստ յայտնեալ
իսլամական կրօնն արդար եւ բանաւոր կը-
րօն մ'է : Բայց մինչեւ ցարդ պաշտօնապէս
չէի ընդգրկած իսլամական կրօնն որպէս զի
չկարծուեր թէ աշխարհային նպատակներ
յաւաջ տանելու հետամուտ կը գտնուէի :
Սակայն, որովհետեւ չեմ կրնար հանդուր-
ժել ապօրէն ձեռնան զոր խղճիս վրայ ի
գործ դնել կ'ուզէ Հայոց Պատրիարքարանն,
որոյ իշխանութիւնն եւ իրաւասութիւնն
արդէն չեմ ճանչնար, —ճնշում, որ ապա-
քէն հակառակ է պատուական կրօնին զոր՝
ներշնամքն Աստուծոյ՝ այժմ ընդգրկած
եմ— ուստի, որպէս զի գիտցուի թէ այ-
սուհետեւ ազատած եմ այդ ճնշումէն, հարկ
կը համարիմ հոչակել թէ մահմետական կը-
րօնն ընդունած եմ, եւ խնդրել որ այս-
պէս արձանագրուելով, պէտք եղած դո-
ժողութիւնը կատարուին :

ՇԱՀՊԱԶ

Թաքէ իւր այս աւուր թուով կը յայտնէ
թէ Շահպազ Կարապետ Էֆէնտի նոր ա-
նունը պիտի լինի «Ալի Շահպազ Էֆէնտի» :

